

Ժողովուրդ

121
(2601)

31 օգոստոսի չորեքշաբթի 2022
տպագրության ժԱ տարի

✉ ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

☎ +374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է ՄԱՍ 80



2019 թվականի սեպտեմբերի 16-ին՝ իր հերթական մամուլի մեծ ասուլիսի ժամանակ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կրկին արել է հայտարարություն եւ, որպես ձեռքբերում, բերել մի փաստ, որն այնքան էլ իրականությանը մոտ չէ: Այդ ժամանակ նա մասնավորապես նշել էր. «Երեւանում ստեղծվել է թափառող կենդանիների վնասազերծման ՀՈԱԿ-ը. սրանով դադարեցվել է շների սպանդի անթույլատրելի պրակտիկան: Թափառող կենդանիները համարակալվում են, ստերջացվում են, նրանց մի մասը հանձնվում է խնամքի: ՀՈԱԿ-ի համար կառուցվում է կայան, որն ապահովված կլինի ժամանակակից հարմարություններով»: Իսկ ի՞նչ պատկեր ունենք այսօր. թափառող շների թեման առ այսօր էլ շարունակվում է ակտուալ մնալ, եւ շարունակվում են նրանց վերաբերյալ ահազանգերը: Նախ՝ նրանք ողջ գիշեր խանգարում են բնակիչների անդորրը, բացի այդ, չեն դադարում նրանց կողմից երեխաներին կծելու դեպքերը: Միայն երկու օր առաջ՝ օգոստոսի 29-ին, Երևանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստում հրապարակվեցին տվյալներ, որ մեկ շաբաթվա ընթացքում արձանագրվել է շների կողմից մարդկանց կծելու 45 դեպք:


Ընդ որում՝ սրանք միայն այն դեպքերն են, որոնք արձանագրված են, եւ մարդիկ դիմել են բուժօգնություններ:

Նիստում եւս արձանագրվեց, որ թվերն իրականում ավելի շատ են: Ստացվում է՝ թափառող կենդանիների վնասազերծման ՀՈԱԿ-ը ստեղծվել է, աշխատանքները կատարվել են, սակայն, ինչպես միշտ, ոչ արդյունավետ: Եվ ի՞նչ է ստացվում. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել է ՀՀ քաղաքացիներին:


Այսօր Բոյուսելում սպասվում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը: Վերջին օրերին՝ այս հանդիպման ընդառաջ, մի շարք հեռախոսազրույցներ են եղել: Երեկ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ: Զրուցակիցներն անդրադարձել են այսօր Բոյուսելում նախատեսված հանդիպմանը: Կողմերը կարելու է են երկխոսության շարունակականությունն ու իույս հայտնել, որ բանակցությունները կլինեն արդյունավետ: Երեկ Մոսկվայում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի եւ Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի երկրորդ նիստը՝ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի եւ ԱՀ փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւի նախագահությամբ: Կոնկրետ արդյունքների վերաբերյալ դեռ տեղեկություններ չկան: Օգոստոսի 29-ին էլ Նիկոլ Փաշինյանն ու ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն էին հեռախոսազրույց ունեցել: Հետաքրքիր է, որ ռուս քաղաքագետ Ստանիսլավ Տարասովը կարծում է, թե հայ-ռուսական հարաբերությունները լավ փուլում չեն, իսկ այս հեռախոսազրույցներն արարողակարգային են միայն: Թերեւս նաեւ դա է պատճառը, որ այսօրվա հանդիպումն անցկացվելու է Բոյուսելում, ոչ թե Մոսկվայում, թեւեւ այլ ազդակներ կային մինչ այդ: «Ներկայումս հայ-ռուսական հարաբերություններն իրենց ամենավատ փուլն են ապրում: Հեռախոսազանգը պետք է պայմանավորել հորեյանի, նաեւ Բոյուսելում կայանալիք հանդիպմամբ: Այլ բան չպետք է փնտրել », - նշեց նա:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Միքայել Արզումանյանին նախկինում մի քանի անգամ ծանուցում է ուղարկվել, որ գա եւ ներկայանա նախաքննական մարմին, սակայն չի ներկայացնել, ինչի արդյունքում նախաքննական մարմինը նրան բերման ենթարկելու որոշում է կայացրել ու Հայաստան գալու ճանապարհին ձերբակալել: Իսկ կոնկրետ ո՞ր քրեական գործով են Միքայել Արզումանյանին հարցաքննել եւ մեղադրանք առաջադրել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նրանք հարցաքննել են Շուշի քաղաքի պաշտպանությունը չիրականացնելու քրեական գործի շրջանակներում, եւ մեղադրանքը վերաբերում է Շուշիի պաշտպանությունը չիրականացնելու ու հանձնելու գործընթացին: Իսկ ի՞նչ է ասել Արզումանյանը նախաքննական մարմնում. նա քննիչի բոլոր հարցերին կոնկրետ պատճառաբանություն չի ներկայացրել, միայն վերջում ասել է, որ մեղադրանքը չի ընդունում: Հիշեցնենք, որ Արզումանյանն այսօր բերման է ենթարկվել Երևան գալու ճանապարհին եւ 72 ժամով ձերբակալվել: Կլավանավորի դատարանի վճռով, թե ոչ, ժամանակը ցույց կտա:



Երեկ Մոսկվայում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի եւ Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի երկրորդ նիստը՝ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի եւ ԱՀ փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւի նախագահությամբ: Պաշտոնական հաղորդագրության մեջ նշվում է, թե եւս մեկ անգամ նրանք հանդիպելու են: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ Հայաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետների երրորդ հանդիպումը կայանալու է երկու երկրների ղեկավարներ Նիկոլ Փաշինյանի եւ Իլհամ Ալիևի հետ հանդիպումից հետո Բոյուսելում: Թե ինչ պայմանավորվածություններ են ձեռք բերվելու կամ ինչի շուրջ են բանակցելու փոխվարչապետները, դեռ պարզ չէ, սակայն հանդիպումը տեղի կունենա մեկ ամսվա ընթացքում:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԸՆԴՈՎՈՒՄ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԻՆ ԳԵՄ ԵՆ

Սեղեսմբերի 2-ին Արցախի Հանրապետության 31-րդ սարդարձն է: «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան այն մասին, որ այդ օրն Արցախի ֆաղաֆակյա Էլիսայի ներկայացուցիչները համահավաք-երբ ողբ է անցկացնեն՝ ոգեկոչելու թե՛ արցախյան դասերագմների ժամանակ նահասակված հերոսների հիշատակը, թե՛ համայն աշխարհին ցույց տալու, որ հայկական հանրապետությունն ապրում ու առարում է: Մրան զուգահեռ ու անկախության սոնին ընդառաջ՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հերթական հանդիպումը կունենան Բրյուսելում: Նախաձեռնողը նորից Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելն է: Թեև հայկական կողմը չի մանրամասնում ինչ օրակարգով են հանդիպելու Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարները, այնուամենայնիվ, դասեցնական Բաբուն վստահեցնում է՝ կողմերը խաղաղության օրակարգի սեֆուսի վրա աշխատող խմբի հետ կապված հարցեր ու մանրամասներ են հստակեցնելու: Այս մասին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի օգնական Հիմեն Ալիևն էր հայտարարել ադրբեջանցի լրագրողների հետ զրույցի ժամանակ: Ի դեպ, դասեցնական Մոսկվան նույնպես մամուլի հրատարակումների միջոցով նման ակնարկներ արել էր: Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի «Արցախություն» խմբակցությունը դասգամավոր Մեսախե Հակոբյանի հետ:



թե ոչ: Տեղեկացված չեն նաե՛լ իրականում լինելու են պատվիրակություններ, թե ոչ: -Փաշինյանն ու Ալիևը վաղը կհանդիպեն Բրյուսելում, ասում են՝ խաղաղության օրակարգի տեքստի մասով են պայմանավորվելու: Արցախում խաղաղ համակեցությունը ինչ-որ կերպ պատկերացնում են: -Նախ՝ Արցախում արդեն իսկ մտահոգություն կա՝ կապված վայրի հետ, թե որտեղ է տեղի ունենալու եռակողմ հանդիպումը՝ հերթական անգամ այդ ցուցադրությունը: Քաղաքականության վեկտորը, կարծես թե, հստակ թեքվել է դեպի Արեւմուտք: Թե ինչի շուրջ կխոսեն, կանխատեսումներ պետք չէ անել, բայց վստահ եմ, որ դա չի լինի՝ ի շահ Արցախի: Յուրաքանչյուր հանդիպումից հետո նոր ու ավելի մեծ աղետ ենք ունենում, հերթական Նոյեմբերի 9 ենք ունենում, ինչպես վերջերս՝ Բերձորի միջանցքի հետ կապված, նաեւ մեր 3 բնակավայրերի հանձնումը թշնամուն: Բնականաբար, այս անգամ ես կա մտահոգություն: Համակեցության հետ կապված. դա ընդհանրապես չի դիտարկվում Արցախում, եւ Արցախում չկա գեթ մի հոգի, որ կգնա այդ մտքին, որ խաղաղություն կլինի: Եթե անգամ այդ հանդիպմանը ժամանակ քննարկվի խաղաղության օրակարգը, Արցախում քաղաքացին չի կարող խաղաղ ապրել արդեթեանցիների հետ: Դա բացառվում է եւ անգամ քննարկման ենթակա չէ, եւ այստեղ դիտարկելու, քննարկելու ինչից էլ չկա: Արցախում մի հոգի չի մնա այն պարագայում, երբ այդ խաղաղության օրակարգի մեջ ներառվի այն հարցը, որ Արցախում պիտի ապրեն հայերը եւ արդեթեանցիները: -Սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտի հրապարակում բողոքի ցույց է նախատեսված նաեւ: ԻՆչ պետք է ասեք, իՆչ պետք է ցույց տաք, եթե այլեւս ոչինչ վաղուց չի ազդում ոչ մեկի վրա: -Սեպտեմբերի 2-ը Արցախի Հանրապետության հռչակման օրն է, եւ այս տարի այդ օրը ոչ թե բողոքի ցույց է լինելու, այլ Ազգային ժողովի 5 խմբակցություններ երթ են իրականացնելու: Երթը լինելու է ժողովրդի մասնակցությամբ, որը ի ցույց կդնի Արցախի ժողովրդի միասնականությունը: Կլինեն ելույթներ՝ այդ օրվա խորհրդի հետ կապված: Այլ մանրամասներ հետ կապված տեղեկություն չունենալով: Ըստ իմ ունեցած տեղեկությունների՝ լինելու են եւ իշխանությունները, եւ հիմնականում ժողովուրդն է լինելու, եւ այդ օրը ընդդիմությունը առանձին որեւէ բան չի նախատեսում:

Ջրուցեց Սեվա ԿԱՐՈՒՄՅԱՆԸ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Ալիսա Ղազարյանը, Վլադիմիր Վարդանյանն ու Արիինե Դավոյանը նախագիծ են ներկայացրել, որով առաջարկում են փոփոխություններ կատարել «Աժ կանոնակարգ» օրենքում: Մասնավորապես, նրանք առաջարկում են ավելացնել մի դրույթ, ըստ որի՝ երդվելուց հետո պատգամավորներն Ազգային ժողովի նիստում ստորագրում են երդման տեքստի տակ: Այս նախագիծով նրանք առաջարկում են նախատեսել բոլոր պատգամավորների համար Ազգային ժողովի նիստում երդման տեքստի տակ ստորագրում: Հիմնավորման մեջ նշվում է, թե առաջարկը նպատակ ունի հրապարակային տրված հանդիսավոր երդմամբ անձանց մոտ ավելացնել իրենց պաշտոնով պայմանավորված պատասխանատվության գիտակցումը: Հանրությանը տրված երդումը ապագայում կծառայի որպես բարեխիղճ, օրինական եւ պատասխանատու վարքագծի կարեւոր բաղադրիչ:

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 25-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ տեղի կունենան նաեւ Ալավերդի արդեն իսկ խոշորացված, բայց կրկին խոշորացվող համայնքում: Բանն այն է, որ հարակից համայնքներն ընդգրկող Ալավերդի սեպտեմբերի 25-ին ընտրություններով հերթական անգամ կխոշորանա՝ իր մեջ ներառելով նախկին Թումանյանի շրջանի գրեթե բոլոր համայնքները, բացառությամբ Թումանյան խոշորացված համայնքի, որն իր մեջ Մոսկորի ենթաշրջանի համայնքներն է ներառում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդեն իսկ հրապարակել է կուսակցությունների՝ ավագանու անդամների համասնական ցուցակը: Ալավերդիում դաշինքներ չեն ձևավորվել, կուսակցություններից էլ մասնակցում են իշխող «Քաղաքացիական պայմանագիրը», «Ապրելու երկիրը», ՀՅԴ-ն ու ՀԱԿ-ը: ԲՊ համամասնական ցուցակի առաջին համարն ու Ալավերդի խոշորացվող համայնքի քաղաքապետի թեկնածուն Աժ ԲՊ-ական պատգամավոր Արեն Սկրտչյանն է: Նա, ի դեպ, դեռ ամիսներ առաջ էր գործուղվել Ալավերդի ու քաղաքացիների հետ հանդիպումներով նախաքարոզարշավային տրամադրություններ էր գնեցրացնում: Գործարար Ռուբեն Վարդանյանի հիմնադրած «Ապրելու երկիրը» այստեղ Ախթալա խոշորացված համայնքի գործող համայնքապետ Արկադի Թամազյանին է առաջադրել, ՀՅԴ-ն՝ Ախթալայի նախկին քաղաքապետ Սուրեն Թամազյանին, ՀԱԿ-ը՝ Ալավերդիում հաշվապահական գրասենյակ ունեցող Նորայր Գեւորգյանին: Հետաքրքիր զուգահեռությամբ Ալավերդիում առաջադրված թեկնածուներից երեքն ուղղակի կամ անուղղակի կապ ունեն Ախթալա համայնքի հետ: Արեն Սկրտչյանն Ախթալայի փեսա է, Արկադի Թամազյանն Ախթալայի գործող համայնքապետն է, իսկ Սուրեն Թամազյանը ծնունդով Ախթալայից է:

ՏԵՂԱԲԱԾԵԿԱԾ ԷՐ

ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ ՆԱԽԱՊԵՍ ՎԱՃԱՌԵԼ ԵՆ

2022 թվականի հուլիսի 26-ին, այսինքն՝ «Սուրմալու»-ի առեսի կենտրոնում ողբերգական դայքյունից եւ հրդեհից 18 օր առաջ, կենտրոնի սեփականատերն ու նրա ընտանիքի անդամները զբաղված են եղել բաժնեմասերի առուվաճառով, համեմայնողեղա, այդ մասին են վկայում ArmLur.am-ի ձեռքի սակ հայտարարած փաստաթղթերը: Տեղեկանում ենք, որ այդ օրվա դրությամբ ընկերության կանոնադրական կադրիսակի բոլոր բաժնեմասերը եղել են վճարված եւ սեղաբախված հետեյալ մասնակիցների միջև՝

Անուն Ազգանուն	Նախարարության իրավաբանական անձանց պետական սեզիտորի միասնական գրանցամատյանում գրանցում ամսաթիվը	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը 99 դրամով
Չախարյան Արթուր Ռազմիկ	26.07.2022թ.	60%	147,630,000
Չախարյան Ռազմիկ Արթուրի	26.07.2022թ.	30%	73,815,000
Չախարյան Էդուարդ Ռազմիկի	26.07.2022թ.	10%	24,605,000
Ընդամենը		100%	246,050,000

Սնկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից և այն գործունեություն է իրականացնում 2019թ. հոկտեմբերի 11-ին ստացած թիվ 22 լիցենզիայի հիման վրա:

Սնկերության հիմնական գործունեության տեսակներն են՝

- վերահսկվող կապիտալի մատուցումը,
- գրանցված (փոխան) փոխառությունների իրականացումը:

Սնկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, Երևան, Աջալույսյոց պողոտա 15:

Սնկերության գործունեության հասցեն է՝ ՀՀ, Երևան, Աջալույսյոց պողոտա 15:

Սնկերության կանոնադրական կադրիսակի բոլոր բաժնեմասերը վճարված են և սեղաբախված են հետևյալ մասնակիցների միջև՝

- Արթուր Չախարյան՝ 60%
- Ռազմիկ Չախարյան՝ 30%
- Էդուարդ Չախարյան՝ 10%:

Սնկերության աշխատակիցների միջին ցուցանիշը բնութագրվում է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 10 (2020թ. դեկտեմբերի 31-ին՝ 12 աշխատակից):

3. Գաղափարային կենտրոն

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվառությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվառությունների միջազգային ստանդարտների (ՀՀՀՄՄ) համաձայն, ինչպես նաև կառավարվել է Հայաստանի Հանրապետության միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՀՄՄ) կողմից:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՑԱՆԿ

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՐԵՄԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂՆԵՐԸ


ԱՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԶԵՌՔԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հետաքննությունը շարունակվում է մի շատ կարևոր անվտանգային հարցի շուրջ՝ ինչպես են Հայաստանի բջջային օպերատորներից «Վիվա USU»-ի քարտերը հայտնվել Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցների ձեռքին, որոնք հայկական հեռախոսահամարներով զանգել են մեր քաղաքացիներին և ահաբեկել շատերին: Հիշեցնենք, որ 2020թ.-ի հուլիսի 24-ին՝ պատերազմից ամիսներ առաջ, ԱՄՇ-ն հայտնել էր, որ Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների աշխատակիցներն օգտագործում են ՀՀ տարբեր բջջային օպերատորների հեռախոսահամարներ և դրանցով զանգահարելով ՀՀ քաղաքացիներին՝ անկախ հետազոտություններ անցկացնելու պատրվակով (իբր կատարում են սոցիալոգիաներ ՀՀ-ում), հատկապես Ջիված ուժերում տիրող իրավիճակի վերաբերյալ հետախուզական բնույթի տեղեկություններ են ստանում: Մասնավորապես, նմանօրինակ հեռախոսազանգեր են արձանագրվել ՀՀ 094-39-75-95 և 093-52-72-08 բջջային հեռախոսահամարներին: Վերոնշյալ բջջային համարները «Վիվա USU»-ի կողմից հեռախոսահամարներ են: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից հետաքրքրվել է, թե արդյոք հեռախոսների քարտի վաճառքը օրինական է եղել: «Փաստ է, որ հեռախոսահամարի գնման դեպքում անձը անձագիր է ներկայացնում, լրացվում են տվյալներ: «Վիվա-USU»-ի աշխատակիցները ստուգել են, թե ում են հեռախոսահամար վաճառում, ում անունով են գրանցված այդ հեռախոսահամարները»: մեր այս պարզ հարցին, սակայն, ՀՀ ԱՄՇ-ն տվել է անկնայտ ոչ ուղիղ պատասխան՝ միայն կրկնելով նախորդ հարցի պատասխանը. «Ինչպես «USU Հայաստան» ընկերությունը, այնպես էլ ՀՀ-ում գործող մյուս բջջային օպերատորները Ադրբեջանի հատուկ ծառայությունների աշխատակիցներին, Ադրբեջանի քաղաքացիներին, ադրբեջանական անձնագրեր ունեցող անձանց հեռախոսահամարներ չեն վաճառել»: Իսկ թե ինչպես են ադրբեջանցիները դարձել «Վիվա USU»-ի հեռախոսահամարի քարտապաններ, շարունակում է անհասկանալի մնալ: «Վիվա USU»-ին ուղղված մեր հարցումները հետո ստացել ենք նույն պատասխանը, թե իրենք ադրբեջանցիներին չեն վաճառել հեռախոսահամարներ: Հարցը շարունակում է մնալ առավել արդիական և վտանգավոր լի. այդ դեպքում ինչպես է Ադրբեջանի հատուկ ծառայությունը դարձել «Վիվա USU» քարտի տեր: ՀՀ ԱՄՇ-ն հստակ չի պարզաբանում, ինչը շատ հարցեր է առաջացնում: Ծարունակելի...

ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏՔԵՐԸ

Օգոստոսի 14-ին «Սուրմալու» առևտրի կենտրոնում տեղի ունեցած խոշոր պայթյունից 10 օր անց՝ օգոստոսի 23-ին, բացվել է առևտրի կենտրոնի հարակից «Փեթթակ» առևտրի կենտրոնը: ArmLur.am-ն երեկ եղել է «Փեթթակ» առևտրի կենտրոնում, գրուցել «Փեթթակ» առևտրի կենտրոնի փոխտնօրեն Նորիկ Զեբյանի հետ, որը մեզ հետ զրույցում ներկայացրել է, թե ինչ հակահրդեհային և ուժեղացված անվտանգային աշխատանքներ են կատարվել: Հիշեցնենք, որ «Փեթթակ» առևտրի կենտրոնի առևտրականները պահանջում էին բացել առևտրի կենտրոնը՝ պնդելով, որ, սեպտեմբերի 1-ին ընդամաք, տնտեսվարողները մեծ վնասներ են կրում: Ավելին՝ նրանց չէր ներկայացվում հիմնավոր պատճառ, թե ինչու է «Փեթթակ» առևտրի կենտրոնը փակ պահվում: Նշենք, որ «Սուրմալու» առևտրի կենտրոնում պայթյունի հետեանքով կա 16 գոհ, որոնքում է մեկ քաղաքացի:

Արցախի հաղափառության գաղափարային ներկայացրած 10 ամենախոշոր ընկերությունները, որոնք, ըստ ՊԱՅԹԱՆԱԳՐԵՐԻ, 2021թ.-ի 9 ամիսների ընթացքում մասնակցել են ժամանակակից ծառայություններ:



Ըստ «Սիվիլնեթ»-ի՝ 1. Ցանկը միանձնյա գլխավորում է «Քարավան» ՍՊԸ-ն, որի 100 տոկոս բաժնետերերը պատկանում է Վայոց ձորից գործարար Հակոբ Հակոբյանին: Հակոբյանը դեռ 90-ականներից է Արցախում շինարարությամբ զբաղվում: Ճանապարհաշինարարական աշխատանքների դիմաց ինքն ամիսների ընթացքում «Քարավանը» պետությունից ստացել է 1,88 մլրդ (կազմում է բոլոր պատվերների 48 տոկոսը) դրամի պատվերներ: Ընկերությունը ճանապարհներ է վերանորոգել, ասֆալտապատել ու բարելավագել: «Քարավանը» պետական ռեզիստորում գրանցվել է 2002թ.-ին: «Հայաստան» համահայկական հիմնադրամի պատվերներով «Քարավանը» 3,53 մլրդ դրամի դիմաց վերակառուցել է Մ-2 ճանապարհից Կոճողոտ համայնք տանող, Մարտակերտ-Ճանկաթաղ ավտոճանապարհի 15 կմ և Մ-2 ճանապարհից

Վերին Հոռաթաղ համայնք տանող ճանապարհի 2 կմ հատվածները: 2. Երկրորդը «Կապավոր» ընկերությունն է, որի 93,75 տոկոս բաժնետերերը պատկանում է շինարար Արման Հակոբյանյանին: Մնացած բաժնետերերը պատկանում են Հակոբյանյանների ընտանիքին՝ 2,5 տոկոսը նրա քրոջը՝ Հայաստանում բնակվող գինեկուղզ Լիլիթ Հակոբյանյանին, որը եղել է Նաե Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի՝ առողջապահության հարցերով խորհրդական (հասարակական հիմունքներով): Նրանք Արցախյան շարժման ակտիվիստ, շինարար, 2006-2007 թթ. Արցախի քաղաքաշինության նախարարի պաշտոնը զբաղեցրած Մարտ Հակոբյանյանի զավակներն են:



Լուսանկարում՝ Արման Հակոբյանյանը Արայիկ Հարությունյանի հետ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շտաբում 2021-ի հունիսի 20-ին Հայաստանի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների օրը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի պատվերով «Կապավորը» 449 մլն դրամի դիմաց Մ-2 ճանապարհից Դահրավ համայնք տանող ճանապարհի 5 կմ հատվածն է վերակառուցել:

3. «Ռոբ-Շին» ՍՊԸ-ն էս խոշոր կապալառու է: Ընկերությունը Արցախի քաղաքաշինության նախարարության պատվերով 40 տուն է վերանորոգել, միայն մեկ պատվեր վերաբերում է Շահումյանի շրջանի Չարեքտար գյուղի օդային գծի վերանորոգմանը: Պետական ռեզիստորում գրանցվել է 2011թ.-ին: Ընկերության միանձնյա բաժնետերերը Ռուլանդ Այդինյանն է: Նա նույնպես Արայիկ Հարությունյանի մտերիմն է: Ռուլանդ Այդինյանը ժամանակին եղել է Քարվաճառի քաղաքապետը: Վերջերս նա Արցախի ԱՄՇ-ում պաշտոն է ստացել: Թե կոնկրետ ինչ պաշտոն է զբաղեցնում ու երբ է աշխատանքի ընդունվել, Արցախի ԱՄՇ-ից մանրամասներ չհարողեցին: Պաշտոնական գրության մեջ միայն ասվում է, որ Ռուլանդ Ռոբերտի Այդինյանը ծառայում է Արցախի Ազգային անվտանգության մարմններում. «Ձեր կողմից հայցվող տվյալները գաղտնագրված են, ուստի հնարավոր չէ տրամադրել»: «Ռոբ-Շինի» հետ Արցախի քաղաքաշինության նախարարության հետ կնքված պայմանագրերի գումարային ծավալը կազմում է 290 մլն դրամ: ՆԱԽՈՎ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ



Ընկերությունը 2020-ի 9 ամիսների ընթացքում 366,5 մլն դրամի ավտոճանապարհներ է վերակառուցել, փոսային վերանորոգումներ իրականացրել է բարեկարգել Ստեփանակերտի փողոցները: «Կապավորը» 2014-2020 թթ. (6,5 տարվա ընթացքում) Ստեփանակերտ քաղաքում կատարված շինարարական աշխատանքների ծավալներով 6-րդն էր (աշխատանքի ծավալը կազմում էր 173,3 մլն դրամ):

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՐՉԱՆԱԳՐՎԵԼ ԵՆ ԽԱՄՏՈՒՄՆԵՐ

Արցախյան պաշտպանության հանձնաժողովը խախտումներ է արձանագրել «աղբյուրի ջուր» և «բնական խմելու ջուր» մակնշումներով շալցված չգազավորված ջրերի շրջանառության ոլորտում:

Վարույթների շրջանակում պարզվել է, որ թվով 9 տնտեսավարող սուբյեկտներ արտադրել են իրացրել են «աղբյուրի ջուր» և (կամ) «բնական խմելու ջուր» մակնշումներով շալցված ոչ գազավորված ջրեր այն դեպքում, երբ այդ ապրանքները ԵՄՍ կանոնակարգի իմաստով չեն հանդիսանում «աղբյուրի ջուր» և «բնական խմելու ջուր», այն է՝ չունեն աղբյուրի ծագում և (կամ) արտադրության որեէ փուլում մշակվել են քլորի պատրաստուկներով:

Այսպիսով, ArmLur.am-ը ներկայացնում է, թե որոնք են այդ 9 ընկերությունները: «Սվ Ջուր» ՍՊԸ-ն՝ «Նոր Արզնի» անվանումով շալցված ջրով, «Ավվայան» ՍՊԸ՝ ՊԷԹ աղբյուրի ջրով, «Սար Համ» ՍՊԸ՝ «Աղբյուրի ջուր Սիփան» ապրանքանիշով, «Թամարա և Անի», որոնք արտադրում են «Վիվան» անվանումով շալցված ոչ գազավորված

ջուր, «Աքվա Արմա Ութեր Բամիկ» ՍՊԸ՝ «Աքվա-Արմա» անվանումով:

Վարույթ է հարուցվել նաե «Սիլ Մաագա» ՍՊԸ-ի նկատմամբ, որը պատկանում է Աժ ԶՊ խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքին: Մյուս ընկերությունն էլ «Ջերմուկ-Ավվա»-ն է, որն էլ պատկանում է ՀՀԿ խմբակցության նախկին պատգամավոր Աշոտ Արսենյանին:

Այսպիսով, իրականացված վարույթների արդյունքում հանձնաժողովը 6 տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կիրառել է նախագաղաղացում, 3 տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ՝ տուգանք, իսկ վարույթներից 3-ը կարճվել են:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՆԻՍՏԻ ԵՆ

Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորներ էրուարդ Աղաջանյանն ու Արմեն Գեորգյանը Թուրքիայի Իզմիր քաղաքում կմասնակցեն Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՆՎ) Սոցիալական, առողջապահության և կայուն զարգացման հար-

ցերի հանձնաժողովի նիստի աշխատանքներին: Հայաստանի Հանրապետության ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը կարգադրություն է ստորագրել պատգամավորներին Թուրքիայի Հանրապետություն գործուղելու մասին:

ԵԽՆՎ Սոցիալական, առողջապահության և կայուն զարգացման հարցերի հանձնաժողովի նիստը տեղի կունենա սեպտեմբերի 21-24-ը:

ԱՆՄԱՔՍ ԱՌԵՎՏՈՒՐ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշմամբ՝ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար առցանց անմաքս առևտրի թույլատրելի շեմը մարտի 31-ից վեց ամսով սահմանվել է 200 հազար դրամ՝ նախկին 200 եվրոյի փոխարեն: Այս մասին տեղեկանում ենք ՊԵԿ-ից:

Ֆիզիկական անձը կարող է օրվա մեջ մի քանի տարբեր կայքերից գնումներ իրականացնել և այդ առաքանիքները ներմուծել Հայաստան: Արտոնության սահմանաչափը կիրառվում է յուրաքանչյուր առաքանու մասով:

ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազությունը Երևանում է հանրառեցությունում կրիմինալ վիճակի միտումների ընթացիկ ուսումնասիրությունները՝ կատարելով անհրաժեշտ վերլուծություններ:



Բնակարանային գողությունների դեպքերը 2022թ. առաջին կիսամյակում կազմել են 596 այն դեպքում, երբ 2021թ. նույն ընթացքում արձանագրվել էր նման 664 դեպք: Այսինքն՝ բնակարանային գողությունների դեպքերը նվազել են ավելի քան 10%-ով:

Նշված դրական միտումները պայմանավորված են վերջին տարիներին վերոնշյալ հանցագործությունների նախակախման, կանխման, բացահայտման, ինչպես նաև առանձին դեպքերում պատժողական քաղաքականության խստացման ուղղությամբ ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնողական գործունեության և իրավապահ մյուս մարմինների հետ համագործակցված համալիր միջոցառումներով:

Միևնույն ժամանակ, սակայն, առանձին հանցատեսակներով նկատելի են հանցագործության դեպքերի աճի մտահոգիչ միտումներ:

Մասնավորապես՝ 53.5%-ով ավելացել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության դեպքերը (2021թ. առաջին կիսամյակում

716, 2022թ.՝ 1099 դեպք), այդ թվում թմրամիջոցների ապօրինի իրացման դեպքերն ավելացել են ավելի քան 91%-ով (263-503):

Հրազենի, ռազմամթերքի ապօրինի պատրաստման և շրջանառության դեպքերն ավելացել են ավելի քան 20%-ով, ինչ, մտահոգիչ լինելով հանդերձ, վկայում է ապօրինի պահվող, շրջանառվող գեներալիսմաթերքի հայտնաբերման ուղղությամբ վերջին շրջանում Ոստիկանության կողմից կատարվող մեծածավալ օպերատիվ աշխատանքի արդյունավետության մասին:

Առավել խնդրահարույց է համակարգչային տեխնիկայի կիրառությամբ կատարվող հափշտակությունների դեպքերի եռակի աճը: Եթե 2021թ. առաջին կիսամյակի կտրվածքով արձանագրվել է այս բնույթի 65 հանցագործության դեպք, ապա 2022թ. նույն ժամանակահատվածում՝ 263 դեպք: Վերջինս առավելապես պայմանավորված է հանցագործների կողմից հանցավոր մտադրությունների իրականացման եղանակների և մեթոդների կատարելագործման, ինչպես նաև հիմնականում քաղաքացիների կողմից իրենց առջանց անհատական տվյալների, բանկային, քարտային հաշիվների, էլեկտրոնային դրամապանակների ծածկագրերի պաշտպանության հարցում դրսևորած անփութության, ցածր իրազեկվածության գործոններով:

Ընդ որում՝ նշված մի քանի ուղղություններով հանցագործությունների աճը, ըստ էության, եղել է կանխատեսելի, ինչով պայմանավորված է եղել ՀՀ դատախազության կողմից մինչ այժմ իրականացված լայն հանրային իրազեկման ապահովումը: Այդ շրջանակում բազմիցս բարձրացվել է համացանցային եղանակով հանցավոր ոտնձգությունների նախակախման նպատակով համապատասխան գործիքների գործադրման, թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների պարագայում՝ նաև հանրային մերժողականության միասնական մթնոլորտի ձևավորման ուղղված տեղեկատվական ակտիվ և համակողմանի քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը:

ԼՈՒՐԵՐ

ԳԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՆԵՎՐՆԵՐԸ

Երեկ Politik.am-ը գրեց, որ Արցախից Երևան գալու ճանապարհին ձերբակալվել է և բերման է ենթարկվել Արցախի Հանրապետության պաշտպանության նախկին նախարար-Պաշտպանության բանակի նախկին հրամանատար, Արցախի նախագահի գործող գլխավոր խորհրդական Միքայել Արզումանյանը: Ինչու է ձերբակալվել՝ դեռ պաշտոնապես հայտնի չէ: Հայտնի չէ նաև՝ մինչ այդ արդյոք Արզումանյանը հրավիրվել է հարցաքննության որոշ կարգավիճակով, որից հրաժարվել է, և դրա համար ուժայինները որոշեցին ձերբակալել նրան: ArmLur.am-ի հավաստի տեղեկություններով՝ ՊԲ նախկին հրամանատարն այս պահին Քննչական կոմիտեի գինվորական քննչական բաժնի ՀԿԳ վարչությունում հարցաքննվում է, սակայն դեռ մեղադրանք չկա առաջադրված: Տեղեկացանք նաև, որ նրան հարցաքննության են հրավիրել 44-օրյա պատերազմի հանգամանքների առնչությամբ հարուցված քրեական գործի շրջանակներում: Հիշեցնենք, որ այսօր զոհվածների և անհետ կորածների ծնողները բողոքի ակցիա են իրականացնելու ՀՀ գլխավոր դատախազության առջև՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ձերբակալելու պահանջով: Եվ, ահա, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Միքայել Արզումանյանին ձերբակալել են պատերազմի մասնակիցների ծնողների բողոքի ակցիային ընդառաջ՝ ցույց տալու համար, որ պատասխանատվության են ենթարկում 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախի Հանրապետության ՊԲ հրամանատարին:

Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմի ժամանակ Ջալալ Հարությունյանի վիրավորումից հետո Արցախի ՊԲ հրամանատար է նշանակվել Միքայել Արզումանյանը, ում պաշտոնավարման ժամանակ էլ 44-օրյա պատերազմը ավարտվեց հայկական բանակի պարտությամբ:

ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գագիկ Հրաչյայի Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022թ. հունիսի 3-ին թվացյալ հասարակական-քաղաքական հայացքներն արտահայտելու պատրվակով «Դիմադրություն» շարժման անվան ներքո 2022թ. ապրիլի 5-ից իրականացվող զանգվածային միջոցառման ժամանակ Երևան քաղաքի Պռոշյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում «Դիմադրություն» շարժումը համակարգողների և այլ անձանց հետ համաձայնեցված համախոհության ուստիկանության աշխատակիցների նկատմամբ իրականացրել է բռնությամբ զուգորդված սարդիչ գործողություններ, որը վերածվել է զանգվածային անկարգությունների՝ հասարակական կարգի անվտանգության նկատմամբ ստեղծելով իրական սպառնալիք:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Ինքնասպանության փորձ՝ Արարատի մարզի Ուրցաձոր գյուղում: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ երեկ Ուրցաձոր գյուղում խառնաշփոթ է եղել: Բանն այն է, որ գյուղի 34 տարեկան բնակչուհին տանը կոկ է տվել 3 հատ ասեղ: Հարազատները, բնակիչները նրան շտապ տեղափոխել են հիվանդանոց, և ներկայումս նա բժշկների հսկողության տակ է: Իսկ թե ինչու է նա ասեղ կոկ տվել, առայժմ պարզ չէ:

ԽՈՒՆԻԳՎՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԵ

ԽԱՄՏՎԵԼ Է ՀԱՄԱՐԱԿԱՆԿԱՆ ԿԱՐԳԸ

ՀՀ Բնչական կոմիտեի Երևան Բաղա- Կի Բնչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական օջառների Բնչական բաժնում ձեռնարկված միջոցառումների արդյունքում դարգվել են դատարանի բակում մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու, ոստիկանների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու դեպքի մի շարք հանգամանքներ:

ԶԿ-ից հայտնում են, որ, նախնական տեղեկություններով, 2022թ. օգոստոսի 22-ին՝ ժամը 15:40-ի սահմաններում, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում այդ պահին ընթացող քրեական դատավարությանը մասնակից անձանց կողմակիցների միջև նշված դատարանի բակում տեղի է ունեցել միջադեպ, որի ընթաց-

քում մի խումբ անձինք բարձրաձայն հայհոյել են ձեռքերով ու ոտքերով հարվածներ են հասցրել կայանված ավտոմեքենաներին ու դրանց ուղեւորներին, ինչը նկատել են նշված վայրում ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության ԵԶԿ ծառայողները, որոնք անմիջապես մոտեցել են, օրենքով սահմանված կարգով ներկայացել և պահանջել չխախտել հասարակական կարգը և դադարեցնել հակաօրինական գործողությունները: Ի պատասխան ոստիկանների օրինական պահանջին՝ վերոնշյալ անձինք հայհոյել են, իսկ նրանցից մեկը հարվածել է ոստիկանին, որից հետո դիմել են փախուստի:

Քրեական վարույթի շրջանակներում կատարվել են քննչական և վարույթային անհետաձգելի գործողություններ՝ դեպքի վայրի զննություն, ամբերտումներ, առգրավումներ, հարցաքննություններ, նշանակվել են անհրաժեշտ փորձաքննություններ:

Իրականացված մեծածավալ միջոցառումների արդյունքում ձեռք են բերվել ապացուցողական նշանակություն ունեցող փաստական տվյալներ և տեղեկություններ, պարզվել են ամբերտույթ հանցագործություն կատարած անձանցից վեցի ինքնությունը, որոնց նկատմամբ, բավարար ապացույցների համակցությամբ, կայացվել են հանրային քրեական հետապնդում իրականացնելու մասին որոշումներ:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ վերջիններիս մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 452-րդ հոդվածի 3-րդ մասով:

Որպես խափանման միջոց հիշյալ վեց անձանց նկատմամբ կիրառվել է կալանավորումը, որոնցից երեքի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Նախաքննությունը շարունակվում է:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 29-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 55 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՉԼՈՒԾՎԱԾ ՀԻՄՆԱՐՄՅԵՐ

Նոյեմբերյան խոշորացված համայնքի հեռավոր, սահմանամերձ Բարեկամական գյուղի՝ Մայիս Ղարաբեղի 2-րդ անվան միջնակարգ դպրոցի աշակերտների քանակը վերջին տարիներին տարեցտարի, անշեղորեն նվազում է: 2022-2023 ուսումնական տարում կրթօջախն ունի 15 աշակերտ, դպրոցն այս տարի ունցել է մեկ շրջանավարտ, սեպտեմբերի 1-ին առաջին դասարան կհաճախի 3 աշակերտ: 2020 թվականի աշնանից կիսատ է մնացել դպրոցի շենքի տանիքի նորոգման գործը. կառույցի տանիքը նորոգվում էր ՌԴ Ստավրոպոլ քաղաքում ապրող բարեկամականացիների հանգանակած գումարներով, սակայն նախահաշիվը սխալ կազմելու հետևանքով գումարները չեն բավարարել, նորոգումը կիսատ է մնացել: Դրա հետևանքով անձրեազրերը լցվում են շենքի հիմքերը, խոնավացնում դասասենյակները:

Պետական բյուջեից գումարներ չեն հատկացվում պետական հիմնարկի՝ հանրակրթական դպրոցի տանիքի նորոգումն ավարտելու համար: Շուրջ երկու տարի է, որ Բարեկամականի բուժկետի տանիքի կեսը բացակայում է: Բուժկետի տանիքը վնասվել էր 2020-ին փոթորկի հետևանքով: Տանիքի կեսի չլինելու հետևանքով անձրեազրերը լցվում են բուժկետ, այնտեղ հակասանիտարական շատ վատ վիճակ է: Խնդիր է նաեւ այն, որ բուժկետի շենքը փաստաթղթերով սեփականատեր չունի: Բարեկամականի վարչական ղեկավար Գարիկ Աբազյանը հայտնեց, որ վերջերս Բարեկամական են այցելել Կարմիր խաչի միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ, եւ կիսով չափ հավանականություն կա, որ Կարմիր խաչի միջոցներով այդ շենքի տանիքը կնորոգվի: Ներկայումս փաստացի 153 բնակիչ ունեցող սահմանամերձ գյուղի ամենամեծ խնդիրը խմելու ջրի պակասը եւ դրա անբավարար որակն է: Գյուղի խորքային հորերից մղվող ջուրը որակյալ չէ, այն պիտանի չէ խմելու համար: Բացի այդ, հատկապես ամռան ամիսներին այդ ջրի քանակը չի բավարարում: Գարիկ Աբազյանը հայտնեց, որ գյուղից վերեւ կա Թաքնազյուղ կոչվող աղբյուր, որի ջուրը բավարար է գյուղին խմելու ջրով ապահովելու համար, սակայն այդ ջրագիծը կառուցելու համար ֆինանսական միջոցներ չկան:

Բարեկամականի համար կարելու խնդիր է այն, որ մինչեւ գյուղի կենտրոն գազատար է մտնում, սակայն 7-8 տարի առաջ գործարկված գազատարը գյուղի առանձնատներին միացնելու ծախսերի համար գյուղացիները գումարներ չունեն: Բարեկամականի վարչական ղեկավարը հայտնեց, որ գյուղը չունի հանդիսությունների սրահ, որտեղ անցկացվեն ուրախության եւ տխրության առիթներով միջոցառումներ: Վերջերս Բարեկամականը ժամկետային գինվորական ծառայության է ճանապարհել համազյուղացի պատանու, այդ առթիվ քեֆն անցկացվել է հարեւան Կոթի գյուղի հանդիսությունների սրահում:

ՆՍՎԻՍ ՍՈՐՈՍՅԱՆ
Տալուշ

ՌԿ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

ՊԱՅԹՈՒՆԱՎՏԱՆԳ ԵՒ ՆՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւ-րի կենտրոնում տեղի ունեցած խոշոր դայթյունից անցել է 16 օր, բայց դեռեւս աղետի գոտի համարվող «Սուրմալու»-ի սարածփից չեն մաքրվել փրակների հեծերը, չի աղամոնցածվել դայթյունավանդ վիճակում գտնվող շինությունը, ինչպես նաեւ միակողմանի փակ է «Սուրմալու»-ին հարակից Սեւանի փողոցը: Իսկ ո՞վ է այս ամենի դասախառնում:

ArmLur.am-ը կապ հաստատեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ՝ պարզելու համար, թե երբ է մաքրվելու տարածքը փլատակներից: ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի խոսնակ Հայկ Կոստանյանը մեզ հետ զրույցում ասաց, որ տարածքի մաքրման աշխատանքներն իրենց տիրույթում չեն գտնվում:

«Մենք մեր մասով իրականացրել ենք որոնաողակարարական աշխատանքներ, իսկ ինչ վերաբերում է տարածքի մաքրման աշխատանքներին, ինչպես նաեւ շենքի հետագա ճակատագրին, տարածքի մաքրումը պետք է որոշի շենքի սեփականատերը. դա մեր գործառնություններից չէ: Իսկ քաղաքապետարանը գուցե որոշակի լծակներ ունի, որով կարող է սեփականատիրոջը հորդորել կամ օրենքով նախատեսված ժամկետ հստակացնել մաքրման համար», - նշեց նա:

Դիմեցինք նաեւ Երեւանի քաղաքապետարանի լրատվության վարչություն՝ նույն հարցի պարզաբանմամբ՝ երբ է մայրաքաղաքը մաքրվելու փլատակներից: Քաղաքապետարանից հակադարձեցին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ փոխանցելով, որ քաղաքապետարանը որեւէ լծակ չունի մասնավոր տարածքում գործառնություններ իրականացնելու կամ միջամտելու:

«Քաղաքապետարանը մասնավոր տարածքում, այս պարագայում պահեստա-



ին, «Սուրմալու» առեւտրի կենտրոնում վթարային վերականգնողական աշխատանքների հետ որեւէ առնչություն ունենալ չի կարող, քանի որ տարածքը նախկին տեսքի բերելու հետ կապված որեւէ լծակ, գործառնությամբ կամ պատասխանատվություն մենք չունենք: Դա քաղաքապետարանի գործառնությունների մեջ չի մտնում, դա հանրային տարածք չէ: Կարծում եմ՝ Ձեր հարցադրումների պատասխանը կարող էք ավելի ճիշտ ստանալ պատկան կառույցներից: Նույնը վերաբերում է նա ճանապարհահատվածին, ուղղորդ նույնպես մեր տիրույթում չէ»:

Դիմեցինք նաեւ ՀՀ ոստիկանություն՝ պահանջելով ճանապարհային ոստիկանության պարզաբանումը՝ ինչու է պայթյունից 16 օր անց փակ «Սուրմալու» գնացող Սեւանի բանուկ փողոցը:

Ներկայացնում ենք նաեւ ճանապարհների մասով պատասխանատու ՀՀ ոստի-

կանության անպատասխանատու պատասխանը. «Բնակչությանը նախապես կտեղեկացնենք ճանապարհի բացման մասին: Այս պահին տեղեկություններ չկան»: Ասել է թե՛ ճանապարհը մաքրելու աշխատանքներ չկան, ու դեռ հայտնի չէ՝ երբ կմեկնարկեն:

Այսպիսով, ստացվում է, որ պետական եւ հանրային մարմինները միմյանց վրա են գցում պատասխանատվությունը, իսկ մայրաքաղաքը շարունակում է հիշեցնել անտեր գոտի:

Իհարկե, փորձեցինք նաեւ սեփականատեր Զախարյաններին գտնել, բայց նրանցից որեւէ մեկը չի պատասխանում հեռախոսազանգերին: Սիւսիսի անպատասխանատվությունն էլ բերեց աղետի, եւ «Սուրմալու»-ի պայթյունի հետևանքով ունեցանք 16 զոհ, 60 վիրավոր եւ 1 անհետ կորած:

ԼԻՂԱ ԵՐԻՍՅԱՆ

ՄԻՋԱԳԱՅԻՆ ՕՐԿԱ ՈՒՂԵՐԶ

ԲՈՒՆԻ ԱՆՐԵՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԶՈՐՆԵՐ

Մարդու իրավունքների դաշտում Բրիտանիայի Գրեյթ Բրիտանիայի Բոնի անհետացումների գոհերի միջազգային օրվա առթիվ: Ուղեծրում ասվում է. «Այսօր Բոնի անհետացումների գոհերի միջազգային օրն է, որը սահմանվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բանաձևով: Մարդկանց բոնի անհետացումները մարդու իրավունքների բազմակի եւ շարունակական խախտումներ են: Գրեյթ սկսվում են դեռույթյան ներկայացուցիչների եւ դաշտում առանց բույսվորյալ կամ համաձայնությամբ, որին հաջորդում է անհետացած անձի գտնվելու վայրի ժխտումը կամ բախտումը»:

Մարդկանց բոնի անհետացումները ծայրահեղ ծանր ազդեցություն ունեն ինչպես գոհերի վրա, որոնք հաճախ ենթարկվում են խոշտանաբանների եւ ապրում իրենց կյանքի համար մշտական վախի մեջ, այնպես էլ նրանց ընտանիքների վրա, որոնք անտեղյակ են իրենց հարազատների ճակատագրից եւ ապրում են նրանց վերադարձի չփարատվող սպասումով: Ցավալիորեն ժամանակակից աշխարհում ընթացող հակամարտությունները բռնի անհետացումների հանցագործության համար «բարենպաստ» միջավայր են ստեղծել, եւ մենք, դժբախտաբար, մեր օրինակով գիտենք ու շարունակում ենք կրել 44-օրյա պատերազմի ընթացքում ու դրանից հետո այս հանցագործության գոհերի ու հարազատների ցավն ու չմարող պայքարը:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ 2022թ. օգոստոսին ներկայացրած տվյալների համաձայն՝ 2020թ. 44-օրյա պատերազմի հետևանքով 303 անձ Հայաստանից դեռեւս անհայտ կորած է համարվում: Աղբյուրներից ինչպես նաեւ իրավունքների կողմից գերիների ու անհայտ կորած անձանց վերաբերյալ տեղեկությունների չտրամադրման կամ այդ տեղեկությունների աղ-ճատման շարունակվող գործելակերպը ոչ այլ ինչ է, քան մարդու իրավունքների հարցերն օգտագործել միջազգային մարդասիրական իրավունքով արգելված քաղաքական նպատակների համար:

Ցավալիորեն բռնի անհետացումների դեպքերին միջազգային արձագանքման մեխանիզմներն այս օրերին դրսևորում են իրենց արդյունավետության պակասը, ինչն այս ուղղությամբ բոլոր դերակատարների հետ միայն ակտիվ աշխատելու պատճառ է: Սրա հետ մեկտեղ պետք է նկատել, որ միջազգային իրավունքով նախատեսված կանոնները կյանքի կոչելու համար պետությունները պետք է ամրագրեն այդ նորմերը ներպետական օրենսդրությամբ եւ ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր քայլերը դրանց գործադրման համար: Ուստի այս առումով Պաշտպանության աշխատակազմը պատրաստակամ է աշխատելու Հայաստանի Հանրապետության կառավարության հետ անհայտ կորած անձանց ու նրանց հարազատների իրավունքների ապահովման վերաբերյալ ներպետական օրենսդրության ու ինստիտուցիոնալ շրջանակի բարելավման ուղղությամբ:

Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկվելով բոլոր միջոցառումները անհայտ կորած անձանց գտնելու եւ նրանց աջակցություն տրամադրելու հարցում խստորեն դատապարտում եմ բռնի անհետացման անխորհրդի դեպքերը եւ կոչ անում միավորել ջանքերը ու ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ բռնի անհետացած անձանց գտնելու եւ վերջիններիս ու նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ երաշխավորման ուղղությամբ»:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 19 ՃՏՊ. 27 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՈՐԻՄ ԲԱԺԻՆ ԿՂԱՍՆԻ

Այս տարվա հուլիսի 1-ին «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթեյանին իշխող «Քաղաքացիական պայմանագրի» պատգամավորները հեռացրին ԱԺ փոխնախագահի պաշտոնից, ընդ որում պաշտոններից հեռացնելու նախաձեռնությունից առաջ իշխանականները չէին բացառում անհարգելի բացակայություններ ունեցող ընդդիմադիրներին նաեւ պատգամավորական մանդատներից զրկելու հնարավորությունը, սակայն դա էլ չկատարվեց: ԱԺ փոխնախագահներից մեկին եւ մշտական երեք հանձնաժողովների նախագահներին առաջադրելու իրավունքը ընդդիմությունն է, սակայն ընդդիմությունը նոր թեկնածուներ չի պատրաստվում առաջադրել: Իշխանությունն էլ իր հերթին եւս չի կարող լրացնել ԱԺ փոխնախագահի այդ թափուր պաշտոնը, եւ այն այդպես էլ կմնա: «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 137-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է խմբակցություններին: Ազգային ժողովի նախագահի երեք տեղակալներից մեկի թեկնածությունը կարող է առաջադրվել միայն ընդդիմադիր խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորների թվից:

ՆԱԻՐԱ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱՆ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը հրապարակել է «Սուրմայու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհված ու վիրավորում ստացած անձանց ու նրանց ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու որոշման նախագիծը: Դրա համաձայն՝ նախատեսվում է պայթյունի հետեւանքով զոհված անձանց, ինչպես նաեւ անհայտ կորած անձի ընտանիքներին վճարել յուրաքանչյուր զոհվածի համար 3 000 000 դրամ միանվագ աջակցություն: Պայթյունի հետեւանքով վիրավորում (խերում, վնասվածք) ստացած քաղաքացիները կստանան մինչեւ 300 000 դրամ աջակցություն, բայց միայն այն դեպքում, եթե հիվանդանոցային բուժում են ստացել: Ընդ որում մինչեւ երեք օր բուժման մեջ գտնված անձանց կտրամադրվի 150 000 դրամ, իսկ երեք եւ ավելի օր բուժման մեջ գտնված անձանց՝ 300 000 դրամ: Պետական աջակցությունից օգտվելու համար շահառուները մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 1-ը պետք է էլեկտրոնային դիմում ներկայացնեն Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն: Սոցիալական աջակցությունը կտրամադրվի անկանխիկ եղանակով՝ շահառուի ներկայացրած բանկային հաշվեհամարին: Գումարների վճարման գործընթացը կմեկնարկի դեկտեմբերի 1-ից հետո, երբ բոլոր շահառուները դիմած կլինեն պետական աջակցությունից օգտվելու համար: Սոցալ նախարարությունը նաեւ նախնական հաշվարկներ է ներկայացրել, որոնց համաձայն՝ ծրագրի շահառու են հանդիսանում 24 վիրավորում ստացած անձինք, որոնցից 17-ը՝ 150.000 դրամ, 7-ը՝ 300.000 դրամ: 16 զոհված ու 1 անհայտ կորած անձանց ընտանիքներին կտրվի ընդհանուր 51.000.000 դրամ յուրաքանչյուրի համար 3.000.000 դրամ: Այս հաշվարկով սոցիալական աջակցության ընդհանուր արժեքը կկազմի 55.650.000 դրամ:

ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ներկայացուցիչները, նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի գլխավորությամբ, ուսումնական տարվան նախադրող հերթական օգոստոսյան խորհրդակցությունն անցկացրել են Գեղարքունիքի մարզում:



Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է ուսուցիչներին նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ՝ մաղթելով խաղաղ եւ արդյունավետ տարի: Մանկավարժներին ողջունել է սերունդներին կրթելու պատասխանատու գործում հաջողություն է մաղթել նաեւ փոխմարզպետ Ռուբին Նավոյանը:

Փոխնախարար Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները՝ առանձին-առանձին անդրադառնալով դրանց համապատասխան պարզաբանումներով:

«Նոր չափորոշիչը բոլոր դպրոցներում կկիրառվի 2023 թ.-ի սեպտեմբերից: Այս տարվանից 9-րդ դասարանին ուղղորդվելու, որ գալիք տարվանից ընտրեն այն առարկաները, որոնք ուզում են խորությամբ ուսումնասիրել», - նշել է նա:

Ըստ նախարարի տեղակալի՝ ֆինանսավորման նոր կարգով մանկավարժները վարձատրվելու են նաեւ խմբակների եւ ուսումնական նախագծերի համար, որոնք առանձին տարի ֆինանսավորվելու են ուսուցչի ծանրաբեռնվածության մեջ:

Ներկայացվել են ուսուցչի վարձատրության բարձրացմանը միտված պետական նոր ծրագրերը, այդ թվում՝ կամավոր ատեստավորումը, ինչի համար Կառավարությունը նոր կարգ է հաստատել, ըստ որի՝ կամավոր ատեստավորման արդյունքում հավելավճար ստացող ուսուցչի դրույքաչափը դարձել է 200.000 դրամ: Կամավոր ատեստավորման նոր փուլն արդեն մեկնարկել է:

Գեղարքունիքից դիմել է շուրջ 200 ուսուցիչ: Ըստ Ժ. Անդրեասյանի՝ հաջող արդյունք ցուցաբերած ուսուցիչները, հոկտեմբերից սկսած, կստանան նախատեսված բարձր աշխատավարձը: Այս տարի ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը կկազմակերպվի մարզերում՝ ԳԹԿ-ի կողմից ձեւավորված քննական կենտրոններում, բացառությամբ մի քանի առարկաների՝ «Նկարչություն», «ՆԶՊ», «Ֆիզկուլտուրա», «Տեխնոլոգիա»:

Ուսուցչի աշխատանքի խրախուսման նպատակով մշակվում են նոր ծրագրեր, որոնցով նախատեսվում է գյուղական փոքր դպրոցների ուսուցիչներին հատկացնել հավելավճար՝ անկախ ատեստավորումից: Հավելավճարներ են նախատեսվում նաեւ բնագիտական եւ ՏՀՏ առարկաներ դասավանդող ուսուցիչների համար:

ԿԳՄՍ փոխնախարարի տեղեկացմամբ՝ որոշվել է հրաժարվել բազմահամակազմ դասարանների ուսուցումից, ինչը նպատակային չէ եւ խոչընդոտում է ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպմանը: Բազմահամակազմ կարող է լինել միայն «Արիստ, արվեստ» եւ «Ֆիզիկական կեն-

սագործունեություն եւ անվտանգություն» բնագավառների առարկաների ուսուցումը: Այս ուսուցիչները կվարձատրվեն ավելի, քան մեկ դասաժամի արժեքն է:

Ֆինանսավորման նոր կարգ է մշակվում նաեւ վարչական աշխատողների համար՝ սահմանելով նվազագույն աշխատավարձի գործակիցներ: Տնօրենների, տեղակալների եւ մյուս վարչաշխատողների վարձատրությունը համադրելիության մեջ կմտնի քաղաքացիների վարձատրության հետ:

«Ձեր աշխատանքի որակից ուղղակիորեն կախված կլինեն դրա շարունակությունը եւ վարձատրության բարձրացումը: Դրական գնահատված տնօրենի պայմանագիրը ավտոմատ կերկարացվի եւս 5 տարի», - ասել է Ժ. Անդրեասյանը:

Փոխնախարարն անդրադարձել է նաեւ «Հանրակրթության մասին» օրենքում վարչական աշխատողների դասավանդման վերաբերյալ փոփոխությանը: Ըստ նրա՝ չի արգելվում դասավանդել, այլ հստակեցվում են պայմանները, առաջին հերթին տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը պետք է ապահովվի ամբողջ դրույքով:

ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչները պարզաբանումներ են ներկայացրել հանրակրթության նոր չափորոշիչներում, «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխության, դպրոցներում համընդհանուր ներառական կրթության ապահովման, ներդրողական խնդիրների լուծման վերաբերյալ եւ կոչ են արել ակտիվորեն դիմել ոլորտում ներկայացված դրամաշնորհային ծրագրերին:

Հանդիպումն ավարտվել է հարցուպատասխանով: Ներկաներին մասնավորապես հետաքրքրել են խմբակների ձեւավորման ու վարձատրության, միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչների հետագա գործունեության, դրույքաչափերի ապահովման վերաբերյալ եւ այլ հարցեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի լրումն երեկվա՝ օգոստոսի 30-ին լուս տեսած հայտարարության՝ ուղղում. սեպտեմբերի 8 եւ 9-ը՝ սեպտեմբերի 13 եւ 14-ի փոխարեն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) եւ ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման եւ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին թիվ 1325-Ն» որոշմամբ (Որոշում)՝ սահմանված կարգով՝ 2022թ. սեպտեմբերի 8-ին եւ 9-ին տեղի կունենան Սյունիքի մարզի դեգրադացված տարածքներում անտառտնկման եւ անտառվերականգնման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ (2-րդ փուլ)՝ հետեյալ ժամանակացույցով՝

Սեպտեմբերի 8, 2022թ.	12:00	Գորայք	համայնք՝ Սպանդարյան բնակավայր
	16:00	Սիսիան	համայնք
Սեպտեմբերի 9, 2022թ.	11:00	Գորիս	համայնք, Խնձորեկ բնակավայր
	14:00	Հարժիս	բնակավայր

Հանրային լսումները տեղի կունենան համայնքապետարանների դահլիճներում:

Համաձայն որոշման՝ գնահատման հայտի վերաբերյալ առաջարկություններ եւ դիտողություններ կարող են ներկայացվել ծանուցումից հետո՝ 12 աշխատանքային օրվա ընթացքում:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.env.am), ք. Երեւան, Բուլվարի 1/3 հասցեում, 011/22-02-17, 011/22-02-18, (011) 575148 էլ. փոստ՝ nune.harutyunyan@rec-caucasus.am:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ». ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

«Ամերիաբանկ»-ը Ձեյթնուում է. նոր մասնաճյուղը ներկայանում է հատուկ առաջարկներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ամերիաբանկ»-ն ընդլայնում է իր աշխարհագրությունը՝ բացելով մասնաճյուղ նաեւ Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Ներսիսյան 1 հասցեում գործող կանաչ ու հյուրընկալ սրահը հաճախորդներին խոստանում է հարմարավետ միջավայր՝ ընձեռնելով «Ամերիաբանկ»-ի ծառայություններից օգտվելու հնարավորություն:

Թվով 23-րդ մասնաճյուղի բացման առթիվ «Ամերիաբանկ»-ը մշակել է նաեւ հատուկ առաջարկներ՝ նախատեսված թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական բոլոր այն անձանց համար, որոնք կդառնան բանկի հաճախորդ՝ «Ձեյթուն» մասնաճյուղում բացելով հաշիվ մինչեւ 31.12.2022թ.-ը ներառյալ:

Հատուկ առաջարկ՝ ֆիզիկական անձանց համար.

- մեկ դեբետային կամ կրեդիտային վճարային քարտ՝ առանց մեկ տարվա սպասարկման վճարի,
 - օնլայն/Մոբայլ բանկինգ ծառայությունների անվճար տրամադրում,
 - հաշվի բացում ծառայությունների փաթեթով՝ անվճար,
 - VISA ստիկեր՝ տարեկան 1500 դր. սպասարկման վճար (3000 դր.-ի փոխարեն):
- Հատուկ առաջարկ՝ իրավաբանական անձանց համար.
- օնլայն/Մոբայլ բանկինգ ծառայությունների տրամադրում մեկ տարի անվճար սպասարկմամբ,
 - ընկերության 2 դեկավարի/իրական շահառուի մեկական դեբետային կամ կրեդիտային վճարային քարտի (VisaClassic, VisaGold, MasterCardStandart, MasterCardGold) տրամադրում, առանց մեկ տարվա սպասարկման վճարի,
 - Business տեսակի քարտի տրամադրում, առանց մեկ տարվա սպասարկման վճարի:

Տեխնիկապես հագեցած, ջերմ ու լուսավոր սրահ, բարեհամբույր անձնակազմ. «Ամերիաբանկ»-ի «Ձեյթուն» մասնաճյուղի դռները բաց են երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 9:30-17:00-ն:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՍԵՎԱԶԳԵՍ ԿԱՆԱՅՔ»

ՆՈՐ ՖԻԼՄԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐԸ

Սեպտեմբերի 16-ին մեծ էկրան կբարձրանա ռեժիսոր Գոռ Կիրակոսյանի «Սեւազգես կանայք» ֆիլմը: Ֆիլմի գործողությունները տեղի են ունենում մի մեծահարուստի հոգեհանգստի ժամանակ:

«Խառնաշփոթը սկսվում է այն ժամանակ, երբ հոգեհանգստին ներկայանում են հանգուցյալի սիրուհիները: Այնպես չէ, որ մտադրված էի կրկին մահվան եւ հոգեհանգստի թեմայով ֆիլմ նկարահանել, պարզապես այս պատմությունը, որի հեղինակը Դավիթ Բաբայանն է, ինձ շատ դուր եկավ, որոշեցի, որ նմանատիպ երկրորդ ֆիլմ ունենամ: Պետք է շեշտեմ, որ այս ֆիլմը եւ «Մեծ պատմություն փոքր քաղաքումը» շատ տարբեր են», - ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Գոռ Կիրակոսյանը:

Ռեժիսորի խոսքով՝ Դավիթ Բաբայանը դեռ 2018-ին, երբ ինքը նկարահանում էր «Ազնիվ գողերը», ներկայացրել էր այս պատմությունը՝ ասելով, որ նմանատիպ ֆիլմ նկարահանելու փորձ ավելի շատ Գոռն ունի:

«Ըստ Դավիթի՝ այս պատմությունն ավելի հարմար էր ինձ: Արդյունքում ես եւ Աշոտ Աբրահամյանն աշխատեցինք ֆիլմի սցենարի վրա: Սցենարը գրելիս կային դերասաններ, որոնց հստակ պատկերացում էինք, բայց, ամեն դեպքում, բոլորի հետ նախնական աշխատանք ենք իրականացրել, որպեսզի հասկանանք՝ համապատասխանում են դերին, թե ոչ: Հանգուցյալի դերում հանդես է եկել դերասան Արտյոմ Մարկոսյանը: Ի դեպ, սա իմ առաջին ֆիլմն է, որում գլխավոր հերոսները կանայք են, եւ ինձ համար նույնպես սա մեծ փորձ էր»:

Ըստ ռեժիսորի՝ Արտյոմը դժվարությամբ է ընդունել դազադում պառկելու



ամառաբերը. «Արտյոմը սցենարը շատ էր հավանել, ցանկություն ուներ նկարահանվելու, սակայն դժվարությամբ պառկեց դազադի մեջ: Հիշում եմ՝ նկարահանման առաջին օրը հենց ուժ գտավ ու պառկեց դազադում, բոլորս նրան երկար ծափահարում էինք»,- նկատում է ռեժիսորը:

Ֆիլմի գլխավոր դերերում նկարահանվել են Իվետա Մուկուչյանը, Լուիզա Ներսիսյանը, Դիանա Մալենկոն, Գրիգոր Դանիելյանը, Ռաֆայել Երանոսյանը, Ռոզի Ավետիսովան, Արտյոմ Մարկոսյանը, Ելենա Վարդանյանը, Ռոմելա Սարգսյանը, Արմեն Դարբինյանը, Աշոտ Տեր-Մաթեոսյանը եւ այլք:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՂԹԱՆԱԿ

ԱՄՆ-ի Սենթ Լուիս քաղաքում անցկացվող Saint Louis Rapid & Blitz-ում արագ խաղի 9 տուրից հետո մեկնարկել է կայծակնային խաղի մրցաշարը: Հայաստանի հավաքականի նախկին առաջատար Լեւոն Արոնյանը (ԱՄՆ) առաջին 9 տուրերում հաղթել է ամերիկացիներ Ջեֆրի Սյունին, Սեմ Շանքլանդին ու Լեւոնի Դոմինգեսին, արդրեջանցի Շահրիյար Մամեդյարովին, ռուսաստանցի Յան Նեպոմյաշչոն, ոչ-ոքի է խաղացել Ֆրանսիան ներկայացնող իրանցի Ալիռեզա Ֆիրուզայի, պարսկերեն է ամերիկացիներ Հիկարու Նակամուրային ու Ֆաբիանո Կարուանային, ֆրանսիացի Մաքսիմ Վաշիտ-Լագրավին: Արոնյանը 13,5 միավորով 6-րդ տեղում է: Առաջատարը Ֆիրուզան է՝ 18 միավոր: Օգոստոսի 30-ին կանցկացվի կայծակնային խաղի եւս 9 տուր: Saint Louis Rapid & Blitz մրցաշարը Grand Chess Tour-ի չորրորդ փուլն է:

ՅՐԳ ԱՆԸՆԳՄԵՋ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Հայաստանը ներկայացնող շախմատիստները շարունակում են ելույթները Դուբայի բաց մրցաշարում: Dubai open մրցազգային 22-րդ մրցաշարում երրորդ անընդմեջ հաղթանակն է տոնել Արամ Հակոբյանը: Հայաստանի մյուս ներկայացուցիչ Սամվել Տեր-Սահակյանը կրկին ոչ-ոքի է ավարտել պարտիան: ԱՄՆ դրոշի ներքո հանդես եկող Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին անդամ Վլադիմիր Հակոբյանը նույնպես առաջատարներից է: Dubai open շախմատային 22-րդ մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով: Մրցաշարին մասնակցում են 171 շախմատիստներ աշխարհի տարբեր երկրներից: Այն կեդրամական սեպտեմբերի 4-ին:

ԹԵՆԻՍԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Ամերիկյան Նյու Յորք քաղաքում մեկնարկել է թենիսի «Մեծ սաղավարտի» ԱՄՆ բաց առաջնությունը: Հայկական արմատներով ռուսաստանյան թենիսիստ Կարեն Խաչատրյանը հաղթանակ է տոնել առաջին շրջանում: Խաչատրյանի մրցակիցը ԱՄՆ-ից Դենիս Կուլիչան էր: 2 ժամ 11 րոպե ձգված մրցախաղում Խաչատրյանը առավելության է հասել չորս սեթերում՝ 3:6, 6:1, 6:2, 6:3 հաշվով: US Open-ի անդրանիկ մրցախաղում հաղթանակ է տոնել Նաեւ աշխարհի առաջին ռակետ Դանիիլ Մեդվեդեւը, որը մոտ 2 ժամ ձգված խաղում հաղթել է ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ստեֆան Կոզլովին երեք սեթերում՝ 6:2, 6:4, 6:0 հաշվով:

ՀԱՂԹԱՆԱԿ՝ 2 ՍԵԹԵՐՈՒՄ

Թենիսի աշխարհի նախկին առաջին ռակետ Սերենա Ուիլյամսը հաղթանակով է մեկնարկել US open-ում: Նյու Յորքում ընթացող «Մեծ սաղավարտի» հերթական մրցաշարի՝ ԱՄՆ բաց առաջնության կանանց մենախաղերի մեկնարկում Սերենա Ուիլյամսը մրցեց Չեռնոգորիայի ներկայացուցիչ Դանկա Կոլիկիչի հետ: 1 ժամ 42 րոպե ձգված մրցախաղում Ուիլյամսը հաղթեց երկու սեթերում՝ 6:3, 6:3 հաշվով: Ավելի վաղ Սերենա Ուիլյամսը հայտարարել էր, որ պրոֆեսիոնալ կարիերան կավարտի ԱՄՆ բաց առաջնությունից հետո:

ԼՈՒՐԵՐ

ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ԵՆ ԼՍՈՒՄՆԵՐ



Հանրային հեռուստաընկերությունն այս օրերին լուումներ է անցկացնում Երեւանում կայանալիք «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի մրցույթի մեր ներկայացուցչին ընտրելու նպատակով: Ավելի վաղ հայտարարված մրցույթին 100-ից ավելի հայտ է ստացվել Հայաստանից եւ տարբեր երկրներից: Մրցույթի երկրորդ փուլի համար Հանրային հեռուստաընկերությունը եւ մասնագիտական ժյուրին առանձնացրել են լավագույն 30-ին,

լսել նրանց կենդանի կատարումներն ու հարցազրույց անցկացրել: Առաջին ավիքը շուտով կհայտարարի «Մանկական Եվրատեսիլի» հայաստանյան պատվիրակի անունը: Ժյուրիի կազմում են «Եվրատեսիլի» հայաստանյան պատվիրակության ղեկավար Դավիթ Ծերունյանը, Առաջին ավիքի երաժշտական պրոդյուսեր Անուշիկ Տեր-Ղուկասյանը, «Մանկական Եվրատեսիլ 2011»-ի Հայաստանի ներկայացուցիչ Դավիթյան, «Եվրատեսիլ 2022»-ի Հայաստանի ներկայացուցիչ Ռոզա Լինը եւ երգահան Լիլիթ Նավասարդյանը:

ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ

«Այստեղից իհարկե հետեւում եմ Հայաստանում կատարվող իրադարձություններին եւ համաշխարհային զարգացումներին», - ArmLur.am-ի հետ զրույցում ասաց բալետմայստեր Ռուդոլֆ Խառատյանը՝ անդրադառնալով Հայաստանում եւ Արցախում կատարվող իրադարձություններին: «Այսօր բոլորը զբաղված են Ուկրաինայով, եւ Հայաստանը չի կարողանում կողմնորոշվել, թե որ կողմն է գաբախանալ: Այսօր Արցախում, Բերձորը լքեցինք, թողեցինք թշնամուն, վառեցինք մեր տները, հաջորդն ի՞նչ է լինելու: Պայքարենք, թե ինչ անենք, որ այս վիճակից դուրս գանք», - ասաց նա: Մեր գրուցակցի կարծիքով՝ «Սուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունն էլ պատահականություն չէ, թեեւ իշխանություններն այդպես են փորձում ներկայացնել: «Ես համոզված եմ ոչ մի պատահական բան չի լինում այս աշխարհում: Մեր դեկավարությունը ո՞նց կարողացավ մեր գյուղերը հանձնել. սրտիցս արյունա կաթում, ինչպե՞ս կարող էին: Չգիտեմ, մեզ նոր հերոսներ են պետք՝ Անդրանիկ, Նժդեհ», - հավելեց նա: Նյութերը՝ ԼԻՂՆ ԵՐԻՍԶՈՐՅԱՆԻ




● Սեպտեմբերի 9-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Փնտրվում է տղամարդ» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞ր ուսանողներին է կրթաթուակ սրվում:
Գրեա Նաջարյան (18 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում պետական կրթաթուակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին:
Պետության կողմից կրթաթուակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթուակի հատկացման մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում

- 1) մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին,
2) գեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում և գանգվածային լրատվության միջոցներում),
3) մասնակցությունը միջբուլեջային, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,
4) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է հաշվարկվում կենսաթուակը կերակրողին կորցնելու դեպքում:
Նաիրա Սիրեկանյան (32 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթուակի չափը ընտանիքի՝ այդ կենսաթուակի իրավունքն ունեցող անդամներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական կենսաթուակի չափին գումարվում է մահացած կերակրողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթուակի աշխատանքային մասի 50 տոկոսը:

Երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթուակի չափը հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական կենսաթուակի չափի հնգապատիկին գումարվում է մահացած յուրաքանչյուր ծնողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթուակի աշխատանքային մասի 50 տոկոսը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Բնակության վայրը փոխելու դեպքում կենսաթուակառույթի բնակության նոր վայրի կենսաթուակի նշանակող ստորաբաժանումը կենսաթուակը վճարում է նախկին բնակության վայրից նրա կենսաթուակի գործը ստանալուց հետո: Կենսաթուակի վճարելը վերսկսվում է կենսաթուակառույթի նախկին բնակության վայրում կենսաթուակի վճարելը դադարեցնելու օրվանից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեանում



Արաբկիր վարչական շրջանի Զեյնա Բռայս 1 փողոցի բնակիչներն ահագանգում են. 20 օր անց «Կեղիա Զուր»-ը վերջապես փորձեց վերացնել նշված փողոցով անխնա հոսող խմելու ջրի կորուստը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47


«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), և մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and a checkbox for home delivery. Includes contact info: (060) 490049, 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 30.08.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: